# ԱԴՐԲԵՋԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՎԱՆԵԼ Է ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ

Սենսացիոն հայտարարություն է արել Ռուսաստանում Ադրբեջանի դեսպան Ռամիզ Ռզաևը. «Մեր բանակցությունները Հայաստանի պատվիրակության հետ ընթացան նորմալ, բարեկամական մթնոլորտում»: Ոնց պարզվեց հակամարտությունից ի վեր այսպիսի բան հայտարարվեց առաջին անգամ:

Ինչպես հայտնի է, արտգործնախարարների պատվիրակների մակարդակով բանակցությունները, որոնց մասնակցում էին նաև ԼՂՀ-ի և Ղարաբաղի ադրբեջանական համայնքի ներկայացուցիչներ, ավարտվեցին կրկին, ավելի ներկայացուցչական կազմով հանդիպելու որոշումով, որպեսզի վերջնականապես ավարտվի 17 կետից բաղկացած քաղաքական մեծ համաձայնագրի քննարկումը:

Ամենաբարդներից մեկը խաղաղարար, բայց էության՝ պարտադրիչ ուժերի կազմի մասին հարցն է: Ադրբեջանը առաջվա պես երկյուղելով ռուսաստանյան զորքերի տեղաբաշխումից, պնդում է, որ դրանք լինեն բազմազգ: Ի դեպ, դեսպանը դա ներկայացրեց իբրև հոգատարություն Ռուսաստանի իմիջի նկատմամբ:

Մոսկովյանի հետ զուգահեռ ամերիկյան Հյուսթոն քաղաքում ստորագրման է նախապատրաստվում Ադրբեջանի համար կարևորագույն նշանակություն ունեցող ծովային երկու նավթավայրեր գործարկելու մասին համաձայնագիրը: Ադրբեջանի զանգվածային լրատվության միջոցները, ջերմությամբ արտահայտվելով մոսկովյան բանակցությունների մասին, նշանակալի ուշադրություն են դարձնում Հյուսթոնի հանդիպումներին, դրանցում հատկապես ընդգծելով Ադրբեջանի նավթային ընկերության փոխնախագահ Իլհամ Ալիևի՝ Ադրբեջանի նախագահի որդու դերը: Ի դեպ, դա բացատրվում է ոչ միայն Հեյդար Ալիևին դուր գալու ձգտումով: Նավթային համաձայնագրի ստորագրումը Ադրբեջանը նկատում է իբրև իր անվտանգության որոշակի երաշխիք: Չէ՞ որ այդ դեպքում հանրապետության իրադրության կայունությամբ կշահագրգռվեն ֆինանսա-արդյունաբերական այնպիսի հսկաներ, ինչպիսիք են «Բրիթիշ փեթրոլիումը» և «Ամոկոն», որոնք անտարակույս ազդեցություն ունեն իրենց կառավարությունների վրա:

Միևնույն ժամանակ, չնայած Ռուսաստանը ստեղծվող նավթային միավորումում կունենա 10 տոկոսի իր չափաբաժինը, Ադրբեջանը նախկինի պես նրան չի ընդունում իբրև գլխավոր գործընկեր: Այսպես, Հեյդար Ալիևը արաբ խոշոր բիզնեսմեն շեյխ Նայդանիին հայտնել է, թե վերջինս կարող է մրցակցել ռուսաստանյան «ԼՈՒԿօյլի» հետ նավթային համաձայնագրի շրջանակներից դուրս մնացած Գյունեշի նավթավայրի գործարկման մասնակցելու իրավունքի համար: Շեյխը անմիջապես հայտնել է, թե կարող է Ադրբեջանի նավթային արդյունաբերության մեջ երկարաժամկետ ներդնել 2 մլրդ դոլար և այդ նպատակով Բաքվում ստեղծել բանկ՝ 300 մլն դոլարի հիմնադրամով:

Երկու համաձայնագրի ստորագրման հավանականությունը մոտ ժամանակներում բավարար իրական է: Սակայն Ադրբեջանի համար կարևոր է, որպեսզի նավթի մասին փաստաթուղթը ստորագրվի ավելի վաղ, քան խաղաղության պայմանագիրը: Այս դիրքերից էլ հարկ է քննարկել քաղաքական մեծ համաձայնագրի ստորագրման ժամկետները:

*ՌՈՒՍՏԱՄ ԱՐԻՖՋԱՆՈՎ*

*«Իզվեստիա»*